ԳՐԱԽՕԱՍՈՒԹԻՒՆ. ԱՂՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՈՐԵՆԻՆԵՐԻ ԽՐԱԽՃԱՆՔԸ

Կամ՝ Ինչ էր կատարվում «Արյան եւ արցունքի երկրում»

Յակոբ Քյունցլեր, Արյան եւ արցունքի երկրում. Տպավորություններ Միջագետքից աշխարհամարտի տարիներին (1914-1918), Գերմաներենից թարգմանեցին՝ Դ. Սաքայան եւ Է. Մակարյան, Երեւան, ԵՊՀ հրատ., 2011:

Բերանն արնոտ Մարդակերը էն անբան
Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան.
Ձեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար,
Ու հեռու է մինչեւ Մարդը իր ճամփան:
Հովհ. Թումանյան

Մոտենում է Հայոց Մեծ Եղեռնի 100-ամյակը, եւ ինչքան մոտենում է, այնքան Թուրքիայի ամենացավոտ նյարդը սկսում է ավելի ահագնորեն ջղաձգվել: Եւ դա հասկանալի է. արդեն երկու տասնյակից ավելի պետություններ ճանաչել են Հայոց Ցեղասպանությունն ու դատապարտել այն: Իսկ բոլորովին վերջերս Ֆրանսիայի Ազգային ժողովը ընդունեց հայոց ցեղասպանությունը ժխտողներին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին օրինագիծ: Եւ այստեղ Թուրքիան ընկավ հիստերիայի մեջ. նախ անմիջապես եւ կանչեց իր դեսպանին, Ֆրանսիային սպառնաց մի քանի փուլանոց պատժամիջոցներ կիրառելու անհեռանկար հոխորտանքով, որոշ ժամանակ իր մեջ թուրքավարի մտածեց, ապա դարձյալ ապավինելով իր հոգեւոր ու դիվանագիտական կարգախոսին՝ «Համբուրիր այն ձեռքը, որը չես կարող կտրել», դեսպանին նորից եւ ուղարկեց, հույսով, որ ամեն ինչ դեռ կորած չէ: Այդ ընթացքում օրինագծի շուրջ դարձյալ քննարկումներ եղան, եւ թեպետ իրավական հարցերի հանձնաժողովը գտավ, որ օրինագիծն իր էությամբ հակասահմանադրական է, այնուամենայնիվ Ֆրանսիայի Սենատը ընդունեց այն: Այժմ օրինագիծը քննարկվում է Սահմանադրական Խորհրդում: Սպասումը թեպետ նյարդայնացնող է, բայց մի բան այլեւս անշրջելի է՝ այսօր լինի, վաղը, թե մյուս օրը՝ օրինագիծն ընդունվելու է: Եւ Ֆրանսիայի օրինակին հետեւելու են նաեւ երկրներ: Իսկ մինչ այդ հարցը կախված է մնալու օդում՝ մինչեւ ե՞րբ է թուրքը թաքնված մնալու իր պատմության արյունոտ պատրաստի հետեւում: Մինչեւ ե՞րբ է թուրքի աչքին ձյունը սեւ ու արյունը ջուր երեւալու: Իրենց մեջ կան նաեւ պատմություն իմացող ու խիղճ ունեցող մարդիկ, որ իրենց պետական այրերին անընդհատ հուշում են՝ վերջ տվեք ջայլամի քաղաքականությանը, հանեցեք մախաթը ջվալից, թե չէ մի օր անակնկալ դուրս է գալու եւ աչքերդ հանի:

Մեծ Եղեռնից հետո թուրքի գազանաբարո վարքի եւ նրա կատարած անպարագիծ ոճրագործության մասին հազարավոր գրքեր են գրվել, հազարավոր փաստաթղթեր են հրապարակվել, գիտաժողովներ են անցկացվել, վավերագրական բազմաթիվ ֆիլմեր են ցուցադրվել, եւ դա շատ բնական է, քանզի չափազանց անսահման է ողբերգության ցավը, եւ չափազանց տարողունակ է այդ ցավի մասին պատմող փաստացի նյութը:

Եւ ահա բոլորովին վերջերս Հանս-Լուկաս Քիզերը վերահրապարակեց Յակոբ Քյունցլերի «Արյան եւ արցունքի երկրում» գիրքը, որի հանձնարարականում կարդում ենք. «Գիրքը նվիրված է Հայոց Ցեղասպանությանը: Քյունցլերը ականատես է եղել 1915 թ. Ուրֆայի հայ բնակչության բնաջնջմանը: Նրա նկարագրությունները հաստատում են, որ հայ ժողովուրդը նահատակվել է օսմանյան կառավարության նախատեսած ծրագրի համաձայն»:

«Արյան եւ արցունքի երկրում» գրքի վերահրատարակման առիթով Հանս-Լուկաս Քիզերի գրած առաջաբանից տեղեկանում ենք, որ Յակոբ Քյունցլերը ծնվել է 1871 թ. Ափենցել Առուսերհոդեն կանտոնի Հունդվիլ գյուղում: Ծագումով չքավոր ընտանիքից էր եւ մանկության տարիներին հաճախ է աշխատել : Վեց տարեկան հասակում կորցրել է հորը, տասնմեկում՝ մորը, որից հետո մեծացել է ազգականների մոտ: Սովորել է հյուսնի արհեստը, ապա 1891-ին մեկնել է Բազել, որտեղ ստացել է հիվանդախնամի կրթություն: 1898 թ. Ուրֆա մեկնած բազելցի բժիշկ Հերման Քրիստի միջոցով, բեռլինցի հոգեւորական Յոհաննես Լեփսիուսը ծանոթացել է Քյունցլերի հետ եւ նրան ներգրավել «Հայկական նպաստամատույց» կազմակերպության մեջ: Որպես այդ կազմակերպության աշխատակից, 1899 թ. Յակոբ Քյունցլերը ուղեւորվել է Ուրֆա, որտեղ ստանձնել է բժիշկ Հերման Քրիստի օգնականի պաշտոնը: Նույն տարում Լեփսիուսը՝ իր ղեկավարած «Հայկական նպաստամատույց» կազմակերպության հիման վրա ստեղծել է «Գերմանական առաքելություն Արեւելքում» կազմակերպությունը՝ Բեռլինն ընտրելով որպես նստավայր: Քյունցլերի հիվանդանոցը, որը 1897 թ. հիմնել էր ցյուրիխցի բժշկուհի Ժոզեֆինե Ցյուրխերը, դարձավ Ուրֆայում բժշկական գործի խաղաղ բեւեռ:

Փաստորեն հայկական ջարդերը պատճառ դարձան, որ եւրոպացիները «Թուրքիայի խորքերում» բարեգործական աշխատանքներ ծավալեն: Դեռեւս 1895 թ. վերջերին Ուրֆայում տեղի ունեցավ՝ այնտեղ գտնվող ամերիկացի միսիոներուհի Կորինա Շաթուքի բնութագրմամբ՝ «Ողջակիզում», որի ժամանակ քարյուղով ողողված 3000 հայեր հրկիզվեցին քաղաքի մեծ եկեղեցում: Նույն տարում, նույնքան մեծ թվով՝ գրեթե բացառապես տղամարդիկ, զոհվեցին Ուրֆայի փողոցներում եւ տներում տեղի ունեցող կոտորածների ժամանակ: Իսկ հրեաներն ստացան դիակները քաղաքից դուրս հանելու եւ ընդհանուր գերեզմաններում թաղելու նողկալի պարտավորությունը: Օսմանյան արեւելյան նահանգներում իրագործված ջարդերը, որոնց զոհ գնաց 100.000 հայ, եւ որոնց մասին լուրը 1895 եւ 1896 թթ. եւրոպական եւ անգլոսաքսոնական աշխարհի բոլոր մասերում զայրույթի ալիք բարձրացրեց: Այդ իրադարձություններից առաջացած ցնցումը Լեփսիուսի, Ցյուրխերի, Քրիստի եւ Քյունցլերի նման մարդկանց մղիչ ուժ դարձավ, որպեսզի անխոնջ նվիրումով տեւական գործունեություն ծավալեն օսմանական Թուրքիայում մարդու իրավունքների, ազգային փոքրամասնությունների եւ կրոնական բախումների բնագավառներում: 1895-ի ջարդերը շատ եւրոպացիների եւ ամերիկացիների ուղեղներում դրոշմեցին «արյունարբու սուլթանի» «բարբարոս իսլամի»

եւ «վայրագ թրքության» կարծրատիպ եւ հարատեւ պատկերներ: Մյուս կողմից, մասնավորապես գերմանացի քարոզիչները, հայերին ներկայացնում էին որպես «այլասերված ցեղ», «Արեւելքի հրեաներ», որոնք դավեր էին լարում եւ միջազգային հասարակության մեջ զբաղված էին բանսարկություններով՝ ուղղված Թուրքիայի կուռ եւ հայրենասեր մեծամասնության դեմ: Եւ հենց այդ պատճառով անմիջապես հիմնադրված բարեգործական կազմակերպությունների Թուրքիա ուղարկված ներկայացուցիչները 1896-1897 թթ. որեւէ դիվանագետից, բացի բրիտանացիներից, իրենց գործունեության մեջ ազդու աջակցություն չստացան: Գերմանական դիվանագիտությունը հրաժարվում էր որեւէ հովանավորություն ցույց տալուց այն հայրենակիցներին, որոնք զբաղվում էին հայերի քաղաքականապես նուրբ թեմայով եւ ճանապարհորդում էին օսմանյան արեւելյան նահանգներով: Սակայն պատկերը փոխվեց մի քանի տարի հետո: Այդ ժամանակ գերմանացիները մեծ ջանք էին թափում տիրանալու արդեն ստեղծված գերմանական միսիոներական հենակետերին, այդ թվում եւ Ուրֆայում եղածներին՝ դրանք Թուրքիայի հետ իրենց քաղաքականության մեջ օգտագործելու նպատակով:

Յակոբ Քյունցլերը դարձավ գլխավոր հենակետը Յոհաննես Լեփսուսի փոքրիկ առաքելական կազմակերպության, որը 1896-ին ամերիկյան բողոքական միսիոներության առաջարկով որպես կենտրոն ընտրեց Ուրֆան: Իր գործնականությամբ եւ վստահելությամբ Քյունցլերը ներկայացնում էր Լեփսիուս անխոնջ իդեալիստի եւ հրապարակախոսի հակակշիռը: Վերջինս իր անձնական մեծ նվիրվածությամբ երեք տասնամյակ շարունակ ոչ միայն օգնություն հասցրեց զոհերին, այլեւ անգնահատելի հրապարակախոսական գործունեություն ծավալեց հանուն Հայ Դատի: Քյունցլերը նաեւ շնորհալի գրող էր: Նրա ուժը՝ ապրածը անմիջապես նկարագրելու կարողության մեջ էր: մի բան, որի նշանակությունը դուրս է գալիս անձնականի շրջանակներից: Քյունցլերը բազմաթիվ հոդվածներ է հրապարակել թերթերում եւ ամսագրերում: Նա գրել է նաեւ տասից ավելի գրքեր ու գրքույկներ: Նա խոսում էր թուրքերեն, քրդերեն, հայերեն եւ արաբերեն: Որպես հաղորդասեր մարդ, նա շփման մեջ էր Ուրֆայի աշխույժ եւ լարված տարածաշրջանի մարդկանց ամենատարբեր խմբերի հետ: Այսպես օրինակ. 1901 թ. նրան տեսնում ենք Ուրֆայի գավառի սահմաններից էլ դուրս, քրդերի ազդեցիկ առաջնորդ Իբրահիմ փաշայի վրանում՝ որպես վերջինիս հյուր: Ասորիների համար դպրոց էր հիմնել: Նա մոտ ընկերներ ուներ քրդերի, թուրքերի, արաբների, ասորիների եւ բնականաբար՝ հայերի շրջանում, որոնք առաքելական իր աշխատանքում առաջին տեղն էին գրավում: Թեեւ նրա շարադրանքները զերծ չէին իր ժամանակներին հատուկ կարծրատիպերից, այնուամենայնիվ դրանք, ընդհանուր առմամբ, աչքի են ընկնում իրենց բաց հայացքով դեպի կրոնական, սոցիալական կամ ազգային պատկանելությունը, ինչպես նաեւ կուսակցությունն ու գաղափարախոսությունը շրջանցող հեռապատկերով եւ ընկալման բազմազանությամբ: Նրա գրվածքները հարուստ են առօրյայի պատմության կարեւոր մանրամասներով:

Հիմա ժամանակն է հայտնի նախապատմությամբ թարմացնելու մեր հիշողությունները...

1908 թ. երիտթուրքերը (միութենականները), որ մինչ այդ գործում էին ընդհատակում, սուլթանին զրկեցին իշխանությունից եւ վերահաստատեցին 1876 թ. օսմանյան սահմա-

նադրությունը: Երիտթուրքերը հրապարակով զղջում էին 1890-ական թվականների կոտորածների համար, մի բան, որ շատ ավելի դյուրին էր, քանի որ դրանք կարելի էր նշավակել որպես «հին վարչակարգի» ոճրագործություններ: Սակայն հեղաղիմական իսլամական ուժերն իրենց երկար սպասեցնել չտվեցին: Նրանց անհանգստացնում էր հարյուրամյակներ շարունակ ենթակա քրիստոնյա «խնամակալների» հավասարեցումը, նրանց ինքնավստահ վարքագիծը եւ տնտեսական-մշակութային աշխուժությունը. Վախենում էին, որ ինչպես 1895-ին, նրանք կձգտեին տիրանալ արեւելյան նահանգներին, ինչպես նաեւ Կիլիկիային (Ադանա): 1909 թ. գարնան ջարդերը սահմանափակվեցին Ադանայի շրջանով, սակայն քիչ էր մնում վերածվեին համատարած աղետի, եթե երիտթուրքերը վճռական միջոցներ չձեռնարկեին հեղաղիմականների դեմ՝ մայրաքաղաքում եւ հատկապես Ուրֆայում: Մյուս կողմից, Ադանայի եւ այլ քաղաքների պաշտոնական վերաբերմունքը երկիմաստ էր եւ տագնապալի հարցեր էր հարուցում ապագա թուրք-հայկական համակեցության վերաբերյալ: Թեպետ եւ կային հոգեմաշ կասկածներ, բայց հազիվ թե որեւէ մեկի մտքով անցներ, որ երիտթուրքերի կուսակցության կարծր կորիզը վեց տարի հետո պիտի գործի դներ ու իրականացներ ցեղասպանություն: Քանի որ միութենականներն արդեն 1908-ին սահմանադրության եւ քաղաքացիական իրավունքների համար այլեւս ազատական մարտիկներ չէին, այլ իշխանամետ հայրենասերներ, որոնք գնալով ավելի էին ձգտում անգիջում ազգայնամոլության եւ այլեւս շահագրգռված չէին բազմազգ «օսմանիզմի» մեջ, կայսրության տարածքային կորուստները Բալկաններում եւ Մագրեբում նրանց առաջնորդեցին վարչակարգի զգալի կոշտացման: 1913-ից միութենականներն սկսեցին կառավարել ինքնիշխան եղանակով: Կուսակցության շատ անդամներ, ինչպես վկայում է Քյուսցլերը, սկսեցին առանց քաշվելու խոսել «հայերին վերացնելու» անհրաժեշտության մասին, քանի որ հայերը խոչընդոտելու էին Փոքր Ասիայում, միատարր ազգային տարածք ստեղծելու ծրագրին, որ իշխողները համարում էին իրենց միակ ելքը:

Ահա այստեղ է, որ սկսվում է «արյան եւ արցունքի երկիրը»: Խոր մտահոգությամբ էին հետեւում Քյուսցլերն ու հատկապես նրա ամերիկացի համամիտներականները կառավարության՝ պատերազմին ներգրավվելու մեծածավալ նախապատրաստություններին: Բնականաբար նրանք դեռ տեղյակ չէին գերմանա-օսմանյան գաղտնի համաձայնագրի մասին, որը երիտթուրքական վարչակարգը 1914 թ. օգոստոսի 2-ին ստորագրեց՝ լցված հպարտությամբ այդպիսի պատվաբեր ընկերակցության համար: Համաձայնագիրը նախատեսում էր, որ թուրքերը պատերազմի մեջ կմտնեն Գերմանիայի ու Ռուսաստանի միջեւ պատերազմի բռնկման դեպքում, պատերազմ, որը մեկ օր առաջ արդեն հայտարարված էր:

Հայերի Ցեղասպանությունը տեղի ունեցավ հիմնականում 1915 թ. ամռան ու աշնան ամիսներին՝ արեւելյան նահանգների տարածքում, Սեւ ծովի եւ Սիրիական անապատի միջեւ: Պատմաբան Առնոլդ Թոյնբին, որն Առաջին աշխարհամարտի ժամանակ որպես երիտասարդ պատմաբան բրիտանական կառավարության հանձնարարությամբ զբաղվում էր հայերի ճակատագրով, 1967 թ. խոր ծերության հասակում գրեց. «Տեղահանումները գործադրվում էին կամահոժար եւ հաշվարկված վայրագությամբ, որպեսզի հնարավորին չափ շատ մարդկանց կյանքեր արժենային: Դա միութենականների հանցագործությունն էր: Այն ժամանակվա իմ ուսումնասիրությունը մտքիս մեջ թողել է այնպիսի անջնջելի տպավո-

բություն, որը չկարողացավ մթագնել Երկրորդ աշխարհամարտի նացիստների ձեռնարկած ավելի սառնարյուն եւ լայնածավալ ցեղասպանությունն անգամ»:

Հայերի զանգվածային ոչնչացումը իր սկիզբն առավ 1915 թ. ամռանը՝ Խարբերդի մոտ, Գյոլջուկ լճի ափին, 150 կմ Ուրֆայից հյուսիս: Միայն հենց այդ վայրում տեղի ունեցավ ավելի քան 10.000 տղամարդկանց, կանանց ու երեխաների սպանդը: Որպես ջարդարարներ՝ իշխանությունները վարձեցին սառը զենքով զինված տեղացի սունի քրդերին, մինչդեռ հյուսիսում գտնվող Դերսիմի ալեւի քրդերը իրենց ինքնավար տարածքը դարձրին հետապնդվողների առանձին խմբերի համար միակ ընդհանուր ապաստարան:

Իր գրքի սկզբում Քյունցլերը գրում է. «Եթե ստանձնում եմ Մեծ պատերազմի ընթացքում Ուրֆայում իմ տեսածն ու ապրածը գրի առնելու գործը, ապա դրա պատճառն առաջին հերթին այն է, որ ես միակ չեզոք անձն եմ, որն սկզբից մինչեւ վերջ ականատեսը եղավ բոլոր այն սարսափելի եղելությունների, որոնցով Ուրֆան ավելի հարուստ է, քան Թուրքիայում որեւէ այլ քաղաք»:

Եւ իրոք Քյունցլերը Ուրֆայում ականատես է լինում զարհուրելի տեսարանների, որոնք կազմակերպել էին երիտթուրքերի կենտրոնական վարչակարգի կողմից ուղարկված Հալիլ եւ Ահմեդ բեյ մարդակերները, որոնք եւ կազմակերպեցին Ուրֆայում հայ ժողովրդի բնաջնջումը՝ այն իրագործելով ժանդարմների, զինվորականների եւ անկանոն ուժերի օգնությամբ: «**Կասկած չկար**, - գրում է Քյունցլերը, - **դա ծրագիր էր եւ ցանկություն**: Դրա համար էլ նրանց՝ հայերին, շարունակ այստեղից այնտեղ էին քշում, մինչեւ որ ոչ մի տեղափոխվելիք մարդ չմնար» (ընդգծումը մերն է): Բայց ամեն ինչի մասին հերթով...

Քյունցլերը Ուրֆա է հասնում այն ժամանակ, երբ այնտեղ մեծ թափով ընթանում էր զորահավաքը: Սկսվել էր 15-ից մինչեւ 50 տարեկան տղամարդկանց, այդ թվում նաեւ քրիստոնյաների, ընդհանուր հաշվառումը, որից խուսափողներին մահապատիժ էր սպառնում:

1914 թ. օգոստոսի վերջերին Ուրֆայում լուրեր են տարածվում, որ Զեյթունի հայերն ընդդիմացել են իրենց զավառի զորակոչին: Այդ լուրերի նպատակը մահմեդական բնակչությանը ապակողմնորոշելն ու շփոթեցնելն էր: Նրանք մտածում էին, որ Ուրֆայի հայերն էլ կարող էին հանկարծ ապստամբության դիմել եւ բարդացնել մահմեդականների վիճակը: Թեեւ մահմեդականներն Ուրֆա քաղաքում մեծամասնություն էին կազմում (մոտավորապես քրիստոնյաների կրկնակին էին), բայց նրանք գիտեին, որ քրիստոնյաները քաջությամբ ու մանավանդ գործիմացությամբ իրենց գերազանցում էին: Եւ երբ օգոստոսի վերջերին Ուրֆայում լուրեր են տարածվում գերմանացիների տարած հաղթանակների մասին, մահմեդականները հաղթանակի յուրաքանչյուր լուր ցնծությամբ են ողջունում: Եւ միաժամանակ սուր աչքով հետեւում էին հայերին, թե արդյոք վերջիններս մասնակի՞ց էին իրենց հրճվանքին, թե՞ նկատելի էր որոշ ներքին դժգոհություն: Հայերի պահվածքից դա դժվար չէր նկատել, առավել եւս, որ առանձին հայեր չէին էլ թաքցնում իրենց կարծիքը, ըստ որի գերմանացիները երբեք չէին կարող շահել պատերազմը, քանի որ նրանք անհամեմատ փոքրաթիվ էին:

Պատերազմը թուրքերի համար ուներ նաեւ մեկ այլ հավելյալ խորհուրդ՝ թալան ու բռնագրավում: Պահեստներում չկար մի բան, որ թուրք սպաները, որպես պատերազմին անհրաժեշտ նյութ, չբռնագրավեին: Տուժյալները, որպես անդորրագիր, ստանում էին ձեռքով գրված գրություններ: Բռնագրավված ապրանքի մեծ մասը, սակայն, գնում էր սպաների

անձնական տները: Այդ էր պատճառը, որ առգրավվում էին ոչ միայն պատերազմին անհրաժեշտ առարկաներ ու ապրանքներ, այլեւ այն ամենը, ինչը որ հրապուրիչ էր ու արժեք ուներ. օրինակ՝ զորգեր, դիմանկարներ եւ այլ կարգի արժեքներ: Մի խոսքով՝ թալան, պատերազմին օգնելու անվան տակ:

Այդ օրերին Ուրֆայի հայերն ամեն կիրակի իրենց Մայր տաճարում տղամարդկանց հավաքներ էին անցկացնում: Քյունցլերի վկայությամբ՝ քաղաքի թուրքերը գրեթե ամեն օր սպառնում էին հայերին: Նրանք բացահայտորեն ասում էին. «Վա՛յ ձեզ, հայեր, եթե Թուրքիայի թշնամիներին հաջողվի, որպես հաղթողներ, իրենց ոտքը դնել թուրքական հողի վրա: Ոչ մի հայ երկրի ներսում կենդանի չի մնա, դրա մասին մենք կհոգանք»: Նման իրավիճակում հայ ժողովրդի խնդիրը պետք է լիներ անհրաժեշտության դեպքում պաշտպանվել բնաջնջումից, Թուրքիայի պարտության դեպքում՝ դիմակայել այնքան ժամանակ, մինչեւ Անտանտի բանակը մտներ երկրի խորքերը: Ամենուրեք, որտեղ հայեր կային, այս ուղղությամբ գաղտնի պատրաստություններ էին տեսնում: Սակայն թուրքերը այդ պատրաստությունների մասին տեղեկացան: Այդ օրերի մասին Քյունցլերը պատմում է. «Ապրիլյան մի երեկո Ուրֆայի հայկական թաղամասում մեծ անհանգստություն տիրեց: Լսել էին, որ հաջորդ առավոտ ձերբակալելու էին հայ ուսուցիչներին: Անմիջապես եկեղեցում ժողով հրավիրվեց: Երիտասարդությունը դիմադրության կոչ արեց, մեծահասակները, սակայն, դեմ էին դրան: Որոշեցին մի քիչ էլ սպասել:

Հաջորդ առավոտ, իսկապես, տեղի ունեցավ ուսուցիչների ձերբակալումը: Տեղի ունեցան նաեւ տնային զանազան խուզարկություններ: Նրանց փնտրածը զենք ու փաստաթղթեր էին:

Մի քանի օր անց ժանդարմները Գարմուջում՝ Ուրֆայի մերձակայքում գտնվող միակ հայկական գյուղում, դասալիք հայեր էին փնտրում: Վերջիններս փախել էին մոտակա լեռն ու այնտեղ ամրացել՝ իրենց հետապնդող ժանդարմներին դիմավորելով կրակոցներով: Ժանդարմները տեղում մի քանի զոհ տվեցին. միայն մոտակա քաղաքից օգնական ուժեր ստանալուց հետո կարողացան մի քանի դասալիք բռնել:

Այս միջադեպը զգալիորեն վատթարացրեց Ուրֆայի հայերի վիճակը... Ձերբակալված հայերից պահանջում էին ցուցմունք տալ, թե որտեղ էին պահում իրենց զենքերը եւ պահանջում էին հանձնել դրանք: Չէ՞ որ հիմա ամեն հայ զենք ուներ: Բայց եւ քաղաքի ամեն երկրորդ բնակիչ զենք ուներ: Հայտնի է, որ Արեւելքում, նույնիսկ խաղաղ տարիներին, անզեն հնարավոր չէ նույնիսկ հաջորդ գյուղը գնալ...»:

Քյունցլերի մեկ այլ վկայություն. «Երկու հայտնի հայեր, պառլամենտի անդամներ Վարդգեսն ու Զոհրապը, այդ օրերին՝ որպես թուրքական բանտարկյալներ, անցան Ուրֆայի մոտով: Նրանք իրավունք ստացան ճանապարհը շարունակել ձիակառքով: Սակայն Ուրֆայից մեկ ժամ դուրս՝ վրա հասավ նրանց չար ճակատագիրը: Նրանց ուղեկցող թուրք սպան երկուսին էլ գնդակահարեց: Ուրֆայի քաղաքային բժիշկը ձիով շտապ տեղ հասավ եւ մահվան վկայական տվեց: Ըստ այդ վկայականի՝ երկուսն էլ իբր թե մահացել էին տիֆից: Ինչո՞ւ էր այս դեպքում այդքան մեծ կարեւորություն տրվում նման բժշկական փաստաթղթի: Մարդիկ ասացին, որ դա արվեց նրանց կյանքի ապահովագրության մեծ գումարների պատճառով, որոնք կառավարությունն ուզում էր յուրացնել»:

Քյունցլերի պատմածներից այնուհետեւ տեղեկանում ենք, որ հուլիսին, երբ արդեն գիտեին որ ուրֆահայության համար նույնպես հասնում էր օրհասական պահը, կանանց դրդմամբ որոշ հայ տղամարդիկ անցան եռանդուն քարոզչության, ըստ որի՝ հայերի կյանքը փրկելու միակ միջոցը իսլամի ընդունումն էր: Սակայն այդ քարոզիչները շատ բանի չհասան: Հայերի ճնշող մեծամասնությունը նախընտրում էր մահը:

Դեռ հունիսի վերջին Ուրֆա էին հասել տեղահանվածների առաջին քարավանները հյուսիսից՝ Խարբերդից եւ Էրզրումից: Նրանք պատմում էին անցած ճանապարհին իրենց գլխին եկած փորձանքների մասին: Ամենասարսափելին այն էր, որ Ուրֆա էին հասնում միայն կանայք ու երեխաներ: Որտե՞ղ էին մնացել այն տղամարդիկ, որոնք վստահաբար եղել էին մարդկային այս շարասյուների ճանապարհ ընկնելու պահին: Դրա մասին ոչ մեկը չգիտեր, կամ ավելի ճիշտ՝ բոլորը գիտեին, սակայն կարծում էին, որ չնշելով զարհուրելին, կանխվում էր իրականությունը: Իսկ իրականությունն այն էր, որ հղփացած կառավարության ստոր գործակալները տղամարդկանց կանանցից անջատել էին եւ Տավրոսի լեռներում, Մալաթիայի ու Սամսատի միջեւ զանգվածաբար սպանել: «Ինչ ողբալի էին այդ կանայք, - գրում է Քյունցլերը, - անպաշտպան մայրերն ու անօգնական երեխաները: Երանելիները նրանք էին, որ երթի ժամանակ մահանում կամ սպանվում էին»:

Բորենիների խրախճանքն սկսված էր, եւ նրանք, իրենց արյունոտ մռութները լիզելով, ապագա մեծ խրախճանքի կանխավայելքի մեջ էին արդեն: «Ամեն ինչ վերջացած է, - ծայրահեղ հուսահատության մեջ ողբում է Ուրֆայի հայերի հոգեւոր առաջնորդը: - Իմ ժողովուրդը զոհասեղանի վրա է: Մեկը չկա, որ ինձ օգնի: Բոլոր հայերս մահվան զավակներ ենք: Ինձ էլ կյանքի միայն մի քանի օր է տրված»:

Ծայրահեղ հուսահատության մեջ գտնվող հոգեւոր առաջնորդը պաղատագին խնդրում է Քյունցլերին, որ նա գնա Եւրոպա, պատմի գեհենում հայտնված հայերի հանդեպ թուրքերի ոճրագործության մասին, եւ ջանա համոզել եւրոպացիներին, որ մի բան անեն մահվան դատապարտված հայ ժողովրդի փրկության համար: Խեղճ մարդը միամտաբար կարծում էր, թե արդարությունն ու խիղճը, ի վերջո, ընդառաջ էին գալու հային, հույս ուներ, որ եթե եւրոպական պետությունները հավատի տեղեկություններ ստանային հայ ժողովրդի սարսափելի ճակատագրի մասին, համապատասխան քայլեր կձեռնարկեին նրա վիճակը բարելավելու համար: Հոգեւոր առաջնորդի հուսահատ վիճակից ազդված Քյունցլերը իրոք որոշում է մեկնել Եւրոպա, բայց ճանապարհածախսի համար բավարար դրամական միջոց չունենալու պատճառով չի կարողանում մեկնել: Թեպետ հետագա ամիսների փորձը ցույց տվեց, որ Ուրֆայում մնալով նա հայ ժողովրդի հրաշքով փրկված տարաբախտների հանդեպ ավելի օգտակար եղավ, քան այն օգնության ակնկալիքը, որով նա պիտի մեկներ Եւրոպա՝ ոչինչ կամ դատարկ խոստում բերելու հեռանկարով: Քյունցլերն իր գրքում մեջբերումներ է կատարում կոտորածից հրաշքով փրկվածների պատմածներից՝ ողբերգության ողջ դիմապատկերը ավելի տեսանելի դարձնելու նպատակով: Հետեւենք նրա օրինակին ու լսենք նրանցից մեկին. «Երբ հրաման եկավ մեզ՝ կանանց ու երեխաներին արտագաղթել, մեր տղամարդկանց արդեն տարել էին եւ ինչպես իմացանք՝ սպանել: Կանանց մի մեծ խումբ գնաց նահանգապետի մոտ՝ խնդրելու, որ մեզ չարտաքսեն, այլ տեղնուտեղը սպա-

նեն: Մենք մեզ իրավունք վերապահեցինք գոնե մահվան այս ձեւը որպես ողորմություն աղերսելու, սակայն այդ շնորհը մեզ չտրվեց, պարտավոր էինք աքսորի ճամփան բռնել:

Մեր Աղիաման քաղաքից մինչեւ Եփրատ, Սամսատի մոտ կարելի է հասնել տասը ժամում: Սակայն մեզ դիտմամբ այնպես էին ծուռումուռ ճանապարհներով տանում, որ մարդկանց քարավանը այդ ճանապարհն անցավ տասը օրում: Մինչեւ Եփրատ ընկած ճանապարհին մեր երիտասարդ կանանցից ու աղջիկներից շատերն արդեն անհետացան: Առաջին երկու գիշերները մեզ հանգիստ թողեցին, սակայն հետո ամեն գիշեր մեզ ստիպում էին իրենց դեռահաս աղջիկներ հանձնել, որոնք հաջորդ առավոտ վերադառնում էին պատվազրկված: Մի անգամ ոմանք համարձակվեցին այդ անառակներին աղջիկների փոխարեն երիտասարդ կանանց տալ: Հաջորդ առավոտ այդ խաբեությունն իրենց թույլ տված մայրերը սպանվեցին:

Քրոջս 12-ամյա աղջկան փրկելու համար, դեմքը սեւացրեցի անճանաչելի դարձնելու աստիճան, գիրկը տվեցի ծծկեր երեխա: Այսպիսով կարողացանք մեզ շրջապատող ժանդարմներին ու քրդերին խաբել. նրանք քրոջս աղջկան երիտասարդ կնոջ տեղ դրեցին: Երբ Ուրֆա հասանք, արդեն երրորդ ծծկեր երեխան էր նրա գրկում, նախկինները հիվանդությունից եւ քաղցից մահացել էին:

Եփրատի ափին ստիպված էինք երկար մնալ: Այստեղ մեր դրամը վերցրին, մեր պատիվը խլեցին: Ով չէր կարողանում դրամ տալ, նրան նետում էին գետը: Մի կնոջ, որից հույս ունեին դրամ կորզել եւ չկարողացան, մարմինը պարանով կապկպեցին ու այդպես ջուրը նետեցին: Քիչ անց դուրս քաշեցին ջրից ու հարցրեցին, թե հիմա ուզո՞ւմ է դրամը մեջտեղ հանել: Սակայն նա այլեւս դրամ չուներ եւ նրան կրկին կապկպեցին ու նետեցին ջուրը: Այստեղ նրան հաջողվեց պարանից ազատ արձակվել ու ինքնակամ ալիքների մեջ սուզվել: Ի վերջո սպառվեց քարավանի սննդամթերքը: Միայն վաշխառուական գներով էինք կարողանում քրդերից ուտելու մի բան ստանալ: Ճանապարհը Սամսատից այն կողմ մինչեւ Ուրֆա կարելի էր նույնպես անցնել 10 ժամում, սակայն մենք դրան հատկացրինք ութ օր: Աղիամանից դուրս եկանք 2000 հոգով, Ուրֆա հասավ միայն 400 մարդ: Այդ 400-ից գրեթե բոլորը հիվանդ էին կամ սովահարությունից զտնվում էին մահվան ճիրաններում»:

Գրքում նկարագրված տեսարաններն այնքան մաշկագերծ ու սահմռկեցուցիչ են, որ պարզ զգայական վերլուծությունն անգամ մարդկային մտքի ջանքին չի տրվում, եւ թուրքի վարքի ընկալումը դուրս է մղվում բանականության զորությամբ պարագծված ամենաբիրտ ու վայրենի չափումներից անգամ: Սա զուտ բնազդով կառավարվող ռոմակի խրախճանք է, որ արյան ու թալանի համին ընկած՝ ինքն իրեն դարձյալ քարանձավում է տեսնում: Իրավիճակներն են տարբեր, արդյունքը նույնն է՝ ավեր ու թալան, անարգում ու կոտորած՝ առանց խտրականության՝ ծեր կլիներ, թե ծծկեր երեխա, կին, թե տղամարդ, որովհետեւ դա իրենց պետության հրամանն էր՝ գլխավոր բորենիների հրամանը՝ առանց խտրականության բնաջնջել ու հոշոտել... Բայց ճիշտ կլինի լսենք իրենց՝ականատեսների վկայությունները: Մեջբերում մի ուրիշ կնոջ պատմությունից. «Բոլորս միասին՝ հազարավոր մեր հայրենակիցների հետ, ստիպված անցանք աքսորի սարսափելի ճանապարհով: Ուղեւորության առաջին մի քանի օրն անցավ լավ. մեզ ուղեկցում էին ամերիկացի միսիոներները: Սակայն

կառավարությունը նրանց հետ ուղարկեց: Հազիվ էին նրանք մեզանից հեռացել, որ սկսվեցին մեր բյուր փառապանքները: Առաջինն այն էր, որ մեզանից խլեցին մեր փղամարդկանց: Նախ՝ նրանց մեր աչքի առաջ ենթարկեցին սոսկալի չարչարանքների եւ ապա՝ հաճախ շատ դանդաղորեն սպանեցին: Հազարավոր կանանց ու երեխաների նետեցին Կիրկ Գյոզ գետը: Այնուհետեւ մեզ փարան լեռներով, որտեղ հազիվ մեկ ոտնաչափ քայլելու տեղ կար: Այլեւս մեզ որեւէ գյուղի մոտով չանցկացրին: Օրերով ոչ հաց էին տալիս, որ ջուր: Սակայն մարդկային կյանքի ամենամեծ կորուստն ունեցանք Եփրատի ափին, Սամսատի մոտաքայքում: Այնտեղ կողոպտեցին մեր բոլորի փողն ու աղջիկների պատիվը: Մոռայլվեց նույնիսկ ամենաբարեպաշտ մարդկանց հոգին: Քանի դեռ փող ունեիր՝ կարող էիր պատիվդ փրկել, սակայն երբ փողդ սպառվում էր, դա էլ այլեւս հնարավոր չէր:

Քանի որ հագուստները փոխելու կամ լվանալու հնարավորություն չկար, սկսեց իշխել կեղտն ու գարշահոտությունը: Մեզանից շատերն ունեին նաեւ սրի կամ դանակի հասցրած վերքեր, որոնք անխնամ էին մնացել: Այդ տարաբախտների մարմինների վրայով որդեր էին սողում: դժվար էր այլեւս այդ խեղճ մարդկանց նայել: Սակայն, ի վերջո, մեզ տիրապետեց այնպիսի մի անօրինակ բթացում, որ ոչինչ այլեւս մեզ չէր տպավորում:

Երբ մեզ վերջապես հրամայեցին երթը շարունակել, մեկ շաբաթ շարունակ քայլում էինք մեռած, քայքայված մարմինների վրայով: Ի վերջո մեզ հանեցին մի լեռան վրա, որտեղ մեզ շրջապատեց քրդերի մի մեծ ամբոխ: Նրանք կողոպտեցին մեր ամբողջ հագուստը: Քույրս չէր կարողանում լեռը մագլցել, նա ամբողջովին ուժասպառ եւ կիսամեռ վիճակում էր: Նա ինձ խնդրեց՝ փայտով սպանել իրեն, որ նորից չընկնի դահիճների ձեռքը: Մագերի միջից հանեց իր վերջին փողն ու տվեց մորս: Սակայն մի քուրդ այդ տեսել էր եւ հաջորդ ակնթարթին մայրիկիցս խլեց այն: Դա իսկապես մեր վերջին փողն էր: Ստիպված քրոջս եւ եղբորս թողեցինք, հավիտենապես հրաժեշտ տալով նրան: Երբ անցանք լեռան մյուս կողմը, եղբորս կինը ծծնդաբերեց: Հագուստի մի ծվեն անգամ չկար, որով կարողանայինք նորածնին բարուրել. նույնիսկ մեր մարմինների վրա ոչինչ չէր մնացել: Ճանապարհին անցանք մի ջրհորի մոտով, որը լեցուն էր մարդկանց քայքայված մարմիններով: Երբ հասանք հաջորդ ջրհորը, մեզ նետեցին փոսի մեջ: Խորքում բազմաթիվ մեռածներ կային, մի քիչ էլ ջուր էր մնացել, այնպես որ ցած նետվածներից ոչ բոլորն էին մահանում: Վերեւից քարեր էին գլորում. ում դիպչում էր, փրկվում էր: Ցավոք ինձ քար չդիպավ: Իմ քույրերից մեկն էլ այդ դժոխքում կենդանի մնաց: Ամբողջ գիշերը մնացինք ջրհորի փոսում՝ անտանելի գարշահոտության մեջ: Հազար անգամ մեր մահը ուզեցինք: Երբ հաջորդ առավոտ չերեւաց մեկը, որ ավարտեր քարերը փոսը նետելու գթասիրտ գործը, մտածեցինք, ի՞նչ անել: Մեռածների մոտ գտանք մի քիչ փող, որը փրկվելու դեպքում կարող էր պետք գալ փառապանքի մեր ուղին շարունակելիս: Գիտեինք, որ փողը մեծ մասամբ թաքցված էր լինում մագերի մեջ: Եւ այդպես մենք հավաքեցինք մի քանի թուրքական ոսկի, որը չխշխկացրինք, երբ վերեւում կրկին մի քրդի գլուխ հայտնվեց: Քուրդը հասկացավ: Նա մեզ երկուսիս դուրս քաշեց, փողը որպես վարձ վերցրեց, իսկ մենք ժամանակավորապես դժոխքից ազատվեցինք...»:

Կարդում ես այս ամենն ու սեւակյան «Զանգակատան» դողանջները դարձյալ արձագանքվում են ականջներիդ մեջ.

.

..Խոցեցին ու ջնջեցին,
Հատեցին հատ ու բարակ,
Հոշեցին ու փանջեցին,
Փշրեցին, փվին կրակ,
Վաթեցին արյուն-արցունք,
Ներկեցին ձոր ու բարձունք,
Քանդեցին երկինք մի լուրթ,
Մորթեցին մի ժողովուրդ,
Հացառատ մի ողջ աշխարհ
Սարքեցին փշրանք-նշխար,
Սուրբ նշխար՝ շան բերանում, -
Ուզեցին մեկ հայ թողնել,
Եւ այն էլ... թանգարանում...
- Գարուն ա, ձուն ա արել...

Ահա թուրքի վարքն ու թիկունքում թողած պատմությունը: Արյունոտ պատմությունը: Եւ այսօր, երբ առաջադեմ մարդկությունը դատապարտում է այդ մեծագույն ոճրագործությունը, երբ ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծերն են ընդունվում, թուրքի համար ավելի թափանցիկ ու ցավալի է դառնում սեփական արյունոտ պատմության հետ առերեսվելը, բայց այդ առերեսումը օդի ու ջրի նման պետք է նրանց, առաջին հերթին իրենց. զուցե թե սեփական մրի ու մրջրի շփոթում մարդակերի խարանով ապրելու գիտակցումը սերունդների հիշողության մեջ մեղմի անասնական բնազդով առաջնորդվող իրենց պապերի ոճիրը: Առերեսում, որտեղ գոնե զղջումի թեթեւ մի երանգ լինի անթեղված, մարդուն անասունից զատող հիշողություն արթնանա, «այստեղով թուրքն է անցել» գնահատականի ճենճահոտում սեփական պատմությանը սեփական աչքերով նայելու համարձակություն դրսեւորվի, որպեսզի բարեւի մեկնած նրանց ձեռքը նողկանք չառաջացնի ու անընդհատ օդում կախված չմնա...

«Մի անգամ, - գրում է Յակոբ Քյունցլերը, - Ուրֆա հասավ ավելի քան հարյուր կանանցից մի խումբ՝ ամբողջովին մերկ վիճակում: Տարագիրների թվում տղամարդիկ այլեւս չկային:

Այդ օրերին, եթե մարդ քաղաքից դուրս գար, ամենուրեք կտեսներ մարդկային դիակներ, որոնք փռված էին դեսուդեն: Նույնիսկ եթե երբեմն մեռածներին թաղում էին, ապա դա արվում էր այնքան թերի, որ վայրի գազանների համար դժվար չէր դիակները քաշել հանել: Մարդկանց սպանված տեղերը այդպես էլ մնացել էին արյունով ներկված: Աղետ էր, ահավոր չարիք, որպիսին ես երբեք չէի տեսել, նույնիսկ այստեղ՝ տեւական թշվառության երկրում...»:

Այս ամեն ինչը տեսնելուց հետո Քյունցլերը եզրակացնում է. «Դասված չկա, որ որոշակի սերտ միության դեպքում հայերը թուրքերին ամիսներով կարող էին հեռու պահել: Սակայն հայերի վաղեմի չարիքը՝ անմիաբանությունը, նրանց համար դարձավ օրհասական, իսկ թուրքերին՝ մեծ օգնական: Բավական է կարդալ այս արտակարգ խելացի ժողովրդի

պատմությունը: Կուռ համախմբվածությունը միշտ բացակա է: Ծվեյցարացիների կարգախոսը՝ «Մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի» չգիտեն նրանք»:

Դժվար է դատողություններ անել մարդու վարքի մասին, երբ նրա կյանքը մազից է կախված, առավել դժվար է, երբ այդ հույսի նշույլ մազն անգամ բացակա է... Ինչ հույսի նշույլ, ինչ խիղճ ու խղճմտանք, երբ մարդկային բախտը բորենու ախորժակին էր հանձնված: Նկարագրված տեսարաններն այնքան սահմռկեցուցիչ են, որ տողերից անգամ ասես արյուն է կաթում: Քյունցլերը գրում է. «Սակավաթիվ էին այն մայրերը, որոնք քաջություն էին գտնում, իրենց երեխաներին կողքից վազող հեղեղատը նետելու, որպեսզի նրանք ժամ առաջ ազատվեին: Ուստի մայրերն իրենց ծծկերներին բակերում կողք-կողքի շարում էին: Այնտեղ նրանք թող ճչային, որքան կարող էին: Իսկ երբ ճիչը կտրվում էր, նրանք մի քանի անգամ օդ էին ծծում, որից հետո մահը նրանց փրկում էր: Վերոհիշյալ հեղեղատը առավոտյան միշտ լցված էր լինում կանաց ու աղջիկների դիակներով, որոնք ընտրել էին գարհանումից խուսափելու այս ձևը: Ի վերջո կառավարությունը կտրել տվեց նաև այդ ջուրը:

Իսկ բուն մահվան այս նվիրյալների տեղափոխումը: Մի՞թե որևէ գրիչ կարող է նման բան նկարագրել: Կանայք չեն ուզում փողոց դուրս գալ: Ժանդարմները մտրակների հարվածներով նրանց դուրս են քշում: Դրսում, ճանապարհի վրա մի կին իրեն նետում է գետնին: Չի ուզում այլևս ոտքի կանգնել: Ժանդարմը նրան տեղնուտեղը սպանելու փոխարեն, սվինով խոցահարում է: Սակայն նա էլի չի ուզում ոտքի կանգնել: Ոստիկանը կրկին է սվինահարում, բայց այնպես, որ կինը ոչ թե մեռնի, այլ միայն վիրավորվի: Վերքերից արյունը հորդում է: Ի վերջո, կինը որոշում է ոտքի կանգնել ու քայլել: Ահա մի ուրիշ կին, որը խելագարվել է: Նա վազվզում է արձակ մազերով, երգում է ու ծիծաղում: Եւ ահա երկրորդը, որ փորձում է փախուստի դիմել կողքի նրբանցքով: Մի ոստիկան նկատում է նրան ու գնում է նրա հետևից: Մի կրակոց, եւ նա փրկվեց: Նա իր քույրերից ավելի բախտավոր է: Քաղաքից դուրս կանգնած են բազմաթիվ մահմեդականներ: Հայուհիներից մեկը իրեն ճանաչել է տալիս, մահմեդականները խլում են նրան ու անհետանում: Երթի մեջ քայլում է նաեւ մի հայ վաճառականի տասնչորս տարեկան աղջիկը: Մի թուրք, որը նրան հետապնդում է, հափշտակում է նրան: Վերջինս, սակայն, դիմադրում է թուրքին: Նա նախընտրում է անապատում մեռնել, քան որևէ մահմեդականի տունը տարվել: Մոտենում է մի ժանդարմ, ոչ թե թուրքին օգնելու մտադրությամբ: Բայց ահա թուրքի ձեռքին փայլփլում է ոսկեդրամը: Ժանդարմը տեղի է տալիս: Դիմադրող աղջիկն անհետանում է թուրքի հետ: Նրան հարեմում սեւ ճակատագիր է սպասում»:

Նման պայմաններում ինքնըստինքյան ենթադրելի է հիվանդությունների եւ համաճարակների բռնկումը: Քյունցլերի վկայությամբ բծավոր տիֆի համաճարակը ծայր էր առել դեռեւս Ուրֆայի պաշարման ժամանակ: Այն ահռելի տարածվել էր բռնագաղթածների ճամբարներում եւ մահ տենչացող հազարավոր տարագիրների համար մեծ սփոփանք էր: Ով որ վարակվում էր, երկրորդ օրն արդեն կորցնում էր գիտակցությունը, եւ ով որ անխնամ էր մնում, ինչպես օրինակ թափառման դատապարտվածները, դեռ գիտակցության չեկած, մի քանի օր անց մեռնում էր: Բոլոր նրանք, որոնց ճանապարհին բաժին էր ընկնում տառապանքներից ազատվելու այս ելքը, մնում էին ճամփեզրին ընկած, մինչեւ որ վրա էր հասնում փրկարար մահը:

Համաճարակը, բնականաբար, խտրականություն չէր դնում մարդկանց միջև, և, իհարկե, կանգ չէր առնում մահմեդականների դռների առջև: Եթե այն սփռվանք էր աքսորյալների համար, ապա նրանց հալածողների համար՝ քաղաքում և երկրում՝ անողոք թշնամի: «Չկար տուն, - գրում է Քյունցլերը, - ուր համաճարակը մուտք չգործեր, չկար տուն, որտեղից չհանվեին այդ հիվանդությանը զոհ դարձած մարդիկ: Հիվանդության զոհերի թիվը պետք է որ հսկայական եղած լիներ, քանի որ այն ասպիճանաբար ընդգրկեց թուրքական պետության ամբողջ տարածքը: Հարանի հարթավայրի մի քանի գյուղերի ամբողջ բնակչությունը, բացի երեխաներից, ոչնչացավ»:

Նման դժոխքում, բնականաբար, անվտանգ չէր նաև տարիներ շարունակ բժշկի աշխատանք ու մարդասիրական գործունեություն ծավալած Քյունցլեր մարդասերի կյանքը: Երբ մի անգամ նա հայ որբերի հորը՝ քահանային, վիրահատելու խնդրանքով մտնում է գեներալի մոտ, գեներալն ուղղակի հարձակվում է նրա վրա. «Ինչ է, դուք հանդգնում եք հաղորդակցվե՞լ այդ դավաճանների հետ: Ո՞վ է Ձեզ թույլ տվել: Մեկ անգամ ևս փորձեք, և ես կկարգադրեմ, որ Դուք էլ արժանանաք նույն վերաբերմունքին, ինչ այդ մարդիկ: Ես հիմա անմիջապես կհրամայեմ, որ Ձեզ այլևս նոր այցելություններ չթույլատրեն»:

Քյունցլերը նույն վերաբերմունքին արժանացավ նաև տարիներ հետո: Երբ նա 1920 թ. օգոստոսին կրկին Ուրֆա ժամանեց, քեմալական «ազատագնդի զինվորները» տեր ու տիրական էին, իսկ քրիստոնյաները՝ նորից ահաբեկված: Այստեղ Քյունցլերը ենթարկվեց հետապնդումների՝ կարծեցյալ լրտեսության կասկածանքով: Շնորհիվ այն վստահության, որ վաստակել էին Քյունցլեր ամուսինները Ուրֆայի ամբողջ տարածքում, նրանց ազատեց վատթարագույնից, ու նրանք կարողացան մեկ անգամ ևս տեղավորվել, բայց միայն ժամանակավորապես: Քյունցլերի երազանքը՝ շարունակել Ուրֆայում ինքնուրույն բժշկական գործունեությունը, փշրվեց Անկարայի կառավարության կողմից դրված բարձրադիր արգելապատի պատճառով: Տարիներ շարունակ նա կատարել էր բժշկի աշխատանք և վայելել համապատասխան հեղինակություն: Ամենուրեք նրա մասին խոսում էին որպես «դ-ր Քյունցլեր»: «Այն ոչ հայը, որի անունը ամենից հաճախ էր հնչում մեր հարցազրույցներում, պապա Քյունցլերն էր», - գրում են Դոնալդ Միլերն ու Լորնա Դուրյան-Միլերը իրենց գրքում, որոնք պատմագրում են հայերի ցեղասպանությունը՝ ելնելով վերապրողների բանավոր հաղորդումներից: Նրանք համոզված են, որ հայերը դեռ երկար պիտի հիշեն այն սերն ու հոգածությունը, որը Յակոբն ու նրա կինը՝ Էլիզաբեթը, նվիրեցին այդ ժամանակի խեղճերից ամենախեղճերին:

Յակոբ Քյունցլերի համար անվտանգ չէր նաև գրքի հրապարակումը, բայց նա այստեղ էլ գտնվեց իր մարդ լինելու կերպի մեջ. 1920 թ. գարնանը, չնայած հատուցումներից վախեցող մտերիմների համառ թախանձանքներին, որոշեց հրապարակել իր գրառումները: Մեկ տարի հետո Պոտսդամի Թեմփել հրատարակչությունը դրանք լույս ընծայեց «Արյան և արցունքի երկրում» գրքով, որը և եղավ Ուրֆայի տարածաշրջանի հայերի արյան և արցունքի եղեռնապատումը: Այն փաստորեն քաղաքականորեն չեզոք դիտորդի անպաճույճ վկայությունն է ցեղասպանության մասին, որը 1915 թ. օսմանահպատակ հայերի նկատմամբ իրագործվեց երիտթուրքերի ռազմական վարչակարգի ձեռքով: Այս վավերագրի պատմական նշանակությունը մեծ է նրանով, որ հեղինակը՝ որպես դեպքերը մոտիկից

տեսած մարդ, պարզաբանում է, թե որն է կանոնավոր հեռագրերով ղեկավարվող եւ կենտրոնական իշխանության կոմիսարների կողմից հսկվող «տեղահանումներ» բառի իսկական իմաստը: Թուրքիայում՝ ճիշտ այնպես, ինչպես նացիստական Գերմանիայում, այդ բառը չէր նշանակում մի ժողովրդի՝ իր ապրած բնակավայրից տեղափոխումն ու վերաբնակեցումը: Այն պարզապես նշանակում էր նրա բնաջնջումը: Քյունցլերի՝ որպես ականատեսի, վկայությունը փաստագրում է Ուրֆայի հայերի ոչնչացման քողարկված քաղաքականությունը:

Այդքան տարի հայերի կողքին ապրելով, նրա հոգսերն ու տառապանքները կիսելով, Քյունցլերը չէր կարող իր ուրույն կարծիքը չկազմել այդ ժողովրդի մասին: «Վերջում, - գրում է նա, - ուզում եմ իմ տեսակետը հայտնել այս ժողովրդի մասին, որը, ինչպես ոչ մեկ այլ ժողովուրդ, կրեց ամենաահավոր ու աննկարագրելի տառապանքներ եւ որը սարսափելի չափերով նվազեց: Թող որ սա ինձ ներվի, նկատի ունենալով, որ այդ ժողովրդի մեջ ապրել եւ աշխատել եմ 20 տարի: Եթե նույնիսկ հայերի մասին իմ գիտեցածը սպառիչ չհամարվի, գոնե թող ինձ իրավունք վերապահվի արտահայտելու իմ կարծիքը:

Ազատասեր ու չափազանց խելացի մի ժողովուրդ վեց հարյուր տարի շարունակ ապրել է մուսուլմանական բռնատիրական վարչակարգի պայմաններում: Նա ենթարկվել է պարբերաբար կրկնվող գանգվածային կոտորածների: Նման իրավիճակների ու տառապանքների ներքո որեւէ ժողովրդի նկարագիրը չի կարող բարելավվել: Բավական է գեթ մի հայացք նետել քաղաքակրթության գլուխ կանգնած ժողովուրդներին, որոնք անցան համաշխարհային պատերազմի բովով: Մի՞թե նրանց նկարագիրն ազնվացավ: Ոչ ոք չի կարող դա լրջորեն հայտարարել: Եւ չմոռանանք, որ այդ պատերազմը տեւեց «միայն» հինգ տարի: Հետեւապես, կարելի՞ էր սպասել, որ հայերը ավելի լավ մարդիկ լինեն, քան մենք՝ եւրոպացիներս: Նրանք, որոնք դարեր ի վեր դիմադրել են խորամանկությանը, նենգությանն ու բիրտ բռնությանը:

Հայերի գործարարությունը Եւրոպայում վատ համբավ ունի: Ճիշտ է, հային գործարար կյանքում հնարավոր չէ հեշտությամբ խաբել: Որպես կանոն դա շատ ավելի դյուրին է մահմեդականի պարագայում:

Սակայն հայերի գործարարությունը ոչ ոք այնպես լավ չի ճանաչում, ինչպես թուրքը: Ո՞ւմ միջոցով է հարուստ թուրքը նախընտրում կատարել իր գործարքները: Հայի միջոցով: Կարելի է անթիվ օրինակներ բերել, որոնք հաստատում են, որ ունեւոր թուրքը իր դրամները փաստորեն միայն հայի միջոցով է շրջանառության մեջ դնում: Չկա հայի պես մեկը, որ կարողանար հարմարվել բոլոր, նույնիսկ ամենադժվար պայմաններին եւ ամեն ինչից էլ շատ ստանար: Ինչպես հին Եւրոպայում՝ առանց իտալացի աշխատողների չկար երկաթուղային շինարարություն, այդպես էլ Արեւելքում առանց հայերի չկար որեւէ առեւտրական գործարք: Սակայն հայերի միայն շատ փոքր հատվածն է առեւտրական: Ընդհանուր բնակչության 80-90 տոկոսը գյուղացիներ են, եւ մի զգալի մաս՝ արհեստավորներ: Բաղդադի երկաթուղու շինարարության ամենաջանասեր աշխատողները հայեր էին: Երկաթուղու շինարարության բոլոր պատասխանատու պաշտոնները զբաղեցնում են հայերը: Բաղդադի երկաթուղու գանձապահը՝ գլխավոր հաշվետարը հայ էր: Անհերեւակայելի ու անհնարին էր, որ Բաղդադի երկաթուղու շինարարության ընկերությունը մեծ ու կարեւոր պաշտոնում նշանակեր որեւէ թուրքի կամ այլ մահմեդականի:

Իր «Արորի եւ մամլակի եւրեւից» գրքում, Մաքս Այտը գրում է, որ կան բաներ, որոնց մեջ Արեւելքն ու Արեւմուտքը իրար չեն հասկանում: Թող ինձ թույլ տրվի այդ միտքը զարգացնել, քանի որ ես երկու բան եմ նկատել:

Առաջինը վերաբերում է ճշմարտությանն ու սրին: Ինչ էլ որ մարդ Արեւելքում լսի, նախ պետք է հարցնի՝ դա ճի՞շտ է: Արեւելյան հայտնի երեւակայությունը հաճախ իրերը զարմանալիորեն ծաղկեցնում է, եւ ամենապարզունակն այն է, որ այն որեւէ այլ տեղ ավելի մեծ հավատի չի արժանանում, քան հենց Արեւելքում: Բողոքական ինչ-որ համայնքի եկեղեցական մի հոգեբանարձու 18 տարի առաջ ինձ ասաց.

- Թուրքական կառավարության սահմաններում ոչ ոք չի կարող ինձ ստիպել ճշմարտությունն ասել, նույնիսկ Աստված չի կարող դա ինձանից պահանջել: Որտեղ միայն սուտն է իշխում, ճշմարտություն չի կարող գոյություն ունենալ:

Պե՞տք է ուրեմն որ մենք քարկոծենք Արեւելքի քրիստոնյաներին, որոնք անիրավություններով լի երկրում միջոցներ են գտնում մի կերպ գոյատեւելու: Նրանք ծնվել են ճահճի մեջ եւ այնտեղ էլ պետք է անցկացնեն իրենց ամբողջ կյանքը»:

Իսկ թուրքերն ասում էին. «Մենք հայերին այլեւս չենք ուզում, որքան էլ նրանց կարիքն ունենանք մեր ամայացած երկիրը վերակառուցելու համար. չէ՞ որ, միեւնույն է, նրանք շարունակելու են մեկ աչքով դեպի Եւրոպա նայել եւ այնտեղից օգնություն սպասել, որն ուղղակի կլինի մեր վարչակարգի դեմ»:

Իսկ թե ինչ տվեց Եւրոպան մեզ՝ բոլորին է հայտնի՝ անտարբերություն: Այս կապակցությամբ Քյունցլերը գրում է. «Հայ ժողովուրդը 1860թ. ի վեր հույսը դնում է Եւրոպայի վրա: Օգնիր ինքդ քեզ, եւ Աստված քեզ կօգնի: Բայց օգնություն մի փնտրիր մեծ տերությունների մոտ: Սպասելի էր, որ դրանից հայերը վերջապես բուժված պետք է լինեին: Մի՞թե դա այդպես է»:

Եւ իր միտքը հիմնավորելու համար նա մի օրինակ է բերում. «1902 թ. էր: Սեւերեկից Խարբերդ տանող ճանապարհի վրա էի: Մեծ քարավանի մեջ կային նաեւ հինգ հայեր, որոնք բոլորն էլ լավ անգլերեն էին խոսում: Դրա վրա զարմացած՝ ես նրանց հարցրի, թե որտեղից էին գալիս ու ուր էին գնում: Նրանք վերադառնում էին իրենց հայրենիքը՝ Խարբերդ:

- Ի՞նչ է, - ասացի ես, - վերադառնում եք այդ ազատ պետությունից, որտեղ ամեն օր կյանքի ապահովություն եք վայելել, իսկ այստեղ ձեզ կրկին վտանգի՞ եք ենթարկում: Ինչ հիմար մարդիկ եք:

Նրանց պատասխանը հատկանշական էր.

- Այն, ինչ տեղի ունեցավ 1895-ին, չի կրկնվի եւ չի կարող կրկնվել: Մեծ տերությունները երբեք նման բան թույլ չեն տա:

Սակայն եկան 1909 եւ 1915 թվականները: Ի՞նչ լավ պաշտպանեցին նրանց մեծ տերությունները... Այն ժամանակ ես հարցրի իրենց վերադարձի պատճառը, եւ նրանց պատասխանից պապանձվեցի: Ահա այն.

- Բեշիկ երի: Այն վայրը, որտեղ կանգնած էր մեր օրորոցը»:

Այս վերջին միտքն իհարկե ոչ Քյունցլերը, ոչ էլ մի որեւէ այլ ազգի ներկայացուցիչ չի հասկանա: Այն միայն հայը կհասկանա:

Ահա այսպես ապրեց ու գործեց Քյունցլեր մարդն ու քաղաքացին, որ ականատեսը

եղավ այն բոլոր սարսափելի եղելությունների, որոնցով Ուրֆան ավելի հարուստ է, քան Թուրքիայում որևէ այլ քաղաք: Ապրեց իր երկրից հեռու, կիսեց հայերի վիշտն ու տառապանքը, նկարագրեց իր ապրածն ու տեսածը՝ անարգանքի այունին գամելով հայերի ցեղասպանությունը իրագործողներին:

Չափազանց կարևորելով նման արժեքավոր գրքի հրատարակումը, ուզում ենք վերջում մեր շնորհակալությունը հայտնել բոլոր նրանց, որոնց ջանքերով հրապարակվել է այս գիրքը: Իհարկե գրքում առկա են մանր թերություններ (մասնավորապես՝ տեքստը ավելորդ բառերով ծանրաբեռնված լինելու առումով), բայց տեքստը այնքան խիտ է ցավ ու տառապանքով, արյունով ու արցունքով, որ սեւեռումի համար կարծես տեղ չի մնում՝ այդ կարգի մանրուքներին տրամադրելու համար:

ՎԱՀԱՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ